## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N 6-Ն
23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 64-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 64-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

### 1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1) Բյուջեի «Ընդամենը եկամուտներ» տողի վարչական մաս սյունակի <<136333.0>> թիվը փոխարինել <<137571.2>> թվով, ֆոնդային մաս սյունակի <<7000.0>> փոխարինել <<5000.0>> թվով.
այդ թվում՝

ա. Բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7131 հոդվածի՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար» տողի <<2054.5>> թիվը փոխարինել <<2062.6>> թվով:

բ. Բյուջեի եկամտային մասի 7136 հոդվածի «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» տողի <<14143.5>> թիվը փոխարինել <<14860.0>> թվով:

գ. Բյուջեի եկամտային մասի 7145 հոդվածի՝ <<Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար>> տողի <<1687.5>> թիվը փոխարինել <<1803.2>> թվով

դ. Բյուջեի եկամտային մասի 7421 հոդվածի՝ << Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ>> տողի <<5363.2>> թիվը փոխարինել <<5361.1>> թվով

ե.<<Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ>> տողի <<4160.0>> թիվը փոխարինել <<4560.0>> թվով

### 2. ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏ

1) Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) լրացնել <<Ընդամենը>> <<48212.3>> հազար դրամ, այդ թվում՝ <<Վարչական մասը>> ՝<<410.0>> հազար դրամ, իսկ <<Ֆոնդային մասը>>՝ <<47802.3>> հազար դրամ:
2) <<Վարչական մասի>> <<410.0>> թիվը ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը: <<Ֆոնդային մասի>> <<47802.3>> թիվը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

### 3. ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1) Բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «Ընդամենը», «վարչական մաս» և «ֆոնդային մաս» սյունակների «136333.0», «136333.0» և «7000.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «185783.5»,«137981.2» և «52802.3» թվերով.

այդ թվում

ա) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<1150.0>> թիվը փոխարինել <<1320.0>> թվով, 4215( ապահովագրական ծախսեր) հոդվածի <<42.0>> թիվը փոխարինել <<46.0>> թվով, 4239(ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<500.0>> թիվը փոխարինել <<700.0>> թվով, 4269(հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<900.0>> թիվը փոխարինել <<1100.0>> թվով, 5122(վարչական սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<700.0>> թվով:

բ) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (ՔԿԱԳ տարածքային կենտրոնի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<70.3>> թիվը փոխարինել <<68.2>> թվով:

գ) Բյուջետային ծախսերի Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (գյուղատնտեսություն) և տնտեսագիտական դասակարգման 5112 ( շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:

դ) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 ( ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 ( շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<4000.0>> թիվը փոխարինել <<5000.0>> թվով, 5112 ( շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<19000.0>> թվով, 5113 ( շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի <<9000.0>> թիվը փոխարինել <<19000.0>> թվով, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<850.0>> թվով, 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<3000.0>> թվով:

ե) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 04, խումբ 09, դաս 01 (տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 8411 (հողի օտարումից մուտքեր) հոդվածի <<-2000.0>> թիվը փոխարինել <<-2700.0>> թվով:

զ) Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 06, խումբ 01, դաս 01 ( բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 5112 ( շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:

է)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 ( փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<2714.7>> թիվը փոխարինել <<7714.7>> թվով, 5112 ( շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<7000.0>> թվով, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<200.0>> թվով:

ը)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 08, խումբ 01, դաս 01 (հանգստի և սպորտի ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4269 ( հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<300.0>> թվով, 4251 ( շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<800.0>> թիվը փոխարինել <<1800.0>> թվով, 5112 ( շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<2252.3>> թվով, 5129 ( այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<300.0>> թվով:

թ)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 01 ( գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 ( էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<80.0>> թիվը փոխարինել <<90.0>> թվով:

ժ)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 09, խումբ 01, դաս 01 ( նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4511 ( սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին) հոդվածի <<10218.0>> թիվը փոխարինել <<11118.0>> թվով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1200.0>> թվով:

ի)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<200.0>> թիվը փոխարինել <<350.0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<50.0>> թվով:

լ)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի <<120.0>> թիվը փոխարինել <<170.0>> թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<50.0>> թվով:

խ)Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<ընդամենը>> և <<վարչական մաս>> սյունակների <<7550.1>> և <<14550.1>>թվերը համապատասխանաբար փոխարինել <<2116.4>> և <<7116.4>> թվերով, այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ տողի <<7000.0>> թիվը փոխարինել <<5000.0>> թվով:

2) Լիազորել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսված գումարի մինչև 40%-ը, ելնելով քաղաքացիների հրատապ ու անհետաձգելի կարիքներից, որոշումներով տրամադրել համայնքի խիստ կարիքավոր ընտանիքներին:

Կողմ -9

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ
6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ
8. ՓԻԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ
9. ԱՎԴԱԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ

Դեմ -1

ՈՒՌՈՒՏՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռնպահ -1

ԳԱԼՈՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
23 հունվարի 2017 թվական